ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 49 - 50 (16138) ՇԱԲԱԹ, 29 ՀՈՒՆԻՍԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՆԱՏՕ-ԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՈՒՂԵԳԻԾԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ»

Հունիսի 26-27-ին, Հյուսիսատլանտյան խորհրդի (NAC) այցի շրջանակներում, Վրաստանում էին գտնվում ալյանսի 28 երկրների դեսպաններն ու գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը:

Հյուսիսատլանտյան խորհրդի այցի շրջանակներում անցկացվեց ՆԱՏՕ-Վրաստան հանձնաժողովի նիստը:

Հունիսի 26-ին Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին ընդունեց ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենին: Կողմերը քննարկեցին Վրաստանում առկա գործընթացները, Հյուսիսատլանտյան ալյանսին Վրաստանի ինտեգրման պրոցեսը:

Վրաստանը «կշարունակի ՆԱՏՕ-ին ինտեգրվելու եւ դաշինքին շուտափույթ անդամակցելու ուղեգիծը»: Այդ մասին վարչապետ

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄԻԽԵԻԼ ՍԱԱԿԱՇՎԻԼԻ. «ՆԱՏՕ-Ի ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՉԻՆՈՎՆԻԿՆԵՐԻ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ԱՅՑ ՄԵՋ ՄՈՏԵՑՆՈՒՄ Է ԱԼՅԱՆՍԻՆ»

Հունիսի 27-ին Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին նախագահական նստավայրում հանդիպում ունեցավ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենի եւ ալյանսի պատվիրակության մյուս անդամների հետ:

Առանձնազրույցից հետո անցկացվեց համամետ մամլո ասուլիս:

Թբիլիսիում, նախագահական պալատում, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի հետ համատեղ մամլո ասուլիսում, Միխեիլ Սաակաշվիլին հայտարարեց, որ «ՆԱՏՕ-ի բարձրաստիճան չինովնիկների յուրաքանչյուր նոր այցը, նաեւ Հյուսիսատլանտյան խորհրդի նիստը մեզ մոտեցնում է ինտեգրման ալյանսին»: Նա ընդգծեց, որ այդ է հավաստում նաեւ ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի նոր այցը:

Իր հերթին, ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարն առանձնակի շնորհակալություն հայտնեց Միխեիլ Սաակաշվիլուն հոկտեմբերի մեկին խորհրդարանական ընտրությունները ժողովրդավարական սկզբունքներով անցկացնելու համար:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐԸ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑԸ ԻՍՐԱՅԵԼ

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հունիսի 24-25-ին պաշտոնական այցով գտնվեց Իսրայելում: Վրաստանի կառավարական պատվիրակության կազմում են Արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեն, Սփյուռքի հարցերի պետնախարար Կոնստանտին Սուրգուլաձեն, էկոնոմիկայի ու տնտեսական զարգացման նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին եւ ներդրումային գործակալության տնօրեն Գիորգի Պերտաիան:

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հուլիսի 25-ին հանդիպում ունեցավ Իսրայելի կառավարության ղեկավար Բենիամին Նեթանյահուի հետ:

Նրանք քննարկեցին ինչպես երկկողմ միջպետական հարաբերությունները, այնպես էլ՝ տարածաշրջանային եւ միջազգային թեմաներ: Մասնավորապես, հանդիպմանը որոշվել է, որ Իսրայելն ու Վրաստանը համագործակցությունը կզարգացնեն տարբեր ուղղություններով:

Իվանիշվիլին հայտարարեց, որ ուրախ է գործընկեր երկիր այցելելու համար, որի ժողովուրդը վրաց ժողովրդի հետ մտերիմ է շուրջ 26 դար: «Այսօր հրատապ է խաղաղության պահպանման ու ահաբեկչության դեմ պայքարի թեման, եւ այդ բնագավառում

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հունիսի 24-ին, մինչեւ պաշտոնական հանդիպումների սկսվելը, Իվանիշվիլին դիտեց Հոլոքոստի թանգարանը եւ պսակ դրեց Հոլոքոստի զոհերի հուշակառույցին: Նա նաեւ մակագրություն արեց պատվավոր հյուրերի մատյանում:

Պաշտոնական այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հանդիպումը Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի հետ: Հունիսի 24-ին Իսրայելի նախագահի նստավայ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐԾԱՐԾՎԵՑԻՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

Հունիսի 27-ին, Թբիլիսիում, Արեւելյան գործընկերության երկրների մշակույթի նախարարների առաջին խորհրդաժողովի շրջանակներում, տեղի ունեցավ Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարար Գուրամ Օդիշարիայի ու Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանի հանդիպումը:

Հանդիպման ընթացքում, քննարկվել է 2013 թվականի հունվարի 17-ին Վրաստանի եւ Հայաստանի մշակույթի նախարարությունների միջեւ կնքված համաձայնագիրը, որը մշակույթի ոլորտում երկու երկրների համագործակցություն է նախատեսում 2013-2015 թվականներին:

Կողմերը նաեւ արծարծել են Վրաստանի տարածքում գտնվող հայկական հուշարձանների եւ Հայաստանի տարածքում գտնվող վրացական հուշարձանների վիճակը:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՈՒՂՂՈՒՄՆԵՐ

Վրաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի իրավաբանական հարցերի եւ մարդու իրավունքների կոմիտեներում քննարկվեցին ընտրական օրենսգրքում կատարվելիք ուղղումները:

Հաջորդ շաբաթ ուղղումները քննարկման առարկա կդառնան խորհրդարանի լիագումար նիստում: Ուղղումները մշակել է միջխմբակցային խումբը: Օրինագծի հեղինակներն են պատգամավորներ Զաքարիա Կուցիաշվիլին, Կախա Օքրիաշվիլին, Իրինա Իմերլիշվիլին, Պավլե Կուբլաշվիլին, Մերաբ Ղաչաղիձեն, Թեմուր Մայսուրաձեն, Գեդեւան Փոփխաձեն, Փրիդոն Սաղվարելիձեն, Վախթանգ Խմալաձեն եւ Շալվա Կիկնավելիձեն:

Նախագծի հեղինակներն առաջարկում են հետեւյալ հիմնական նորամուծությունը՝ ընտրողների կենսաչափաբանական ցուցակներ: Մասնավորապես, նախատեսվում է 2014 թվականին տեղական ընտրությունները եւ Թբիլիսիի քաղաքապետի ընտրությունները անցկացնել կենսաչափաբանական ցուցակներով:

Օրինագիծը նախատեսում է հաստատել լրացուցիչ սահմանափակումներ այն անձանց համար, ում օրենքն արգելում է մասնակցել նախընտրական քարոզարշավին:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հունիսի 27-ին Միասնական ազգային քննությունները սկսվեցին վրաց լեզվի եւ գրականության քննությունից:



Քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվության համաձայն, այդ օրն առավոտյան ժամը 06.30-ին, քննական թեստերը ոստիկանության վարչություններից փոխադրվեցին քննական կենտրոններ:

Վրաստանի 12 քաղաքների 18 քննական կենտրոններում թեստավորում անցավ 10 հազար դիմորդ: Քննությունների անցկացմանը մասնակցեց ավելի քան 1800 դիտորդ եւ համակարգող:

Բոլոր քննական կենտրոններում բացված են բուժկենտրոններ՝ հագեցված առաջին բուժօգնության ցույց տալու համար անհրաժեշտ դեղորայքով: Հերթապահում են նաեւ շտապ օգնության բրիգադը եւ փրկարարներ: Կարգուկանոնն ապահովում է պարեկային ոստիկանությունը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րում կայացած այդ հանդիպմանը կողմերը քննարկեցին երկրների միջեւ հարաբերությունների զարգացման հեռանկարները: Ի թիվս այլ թեմաների, քննարկվել են Վրաստանի եւ Իսրայելի առեւտրատնտեսական հարաբերությունների հարցերը:

Երուսաղեմում, պաշտոնական այցի ընթացքում, ստորագրվեց միջկառավարական հանձնաժողով ստեղծելու համաձայնագիր:

Թել-Ավիվում կայացավ վրաց-իսրայելական բիզնես-համաժողով: Բիզնես-համաժողովը բացեց Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին: Համաժողովին մասնակցեց Իսրայելի գործարար շրջանների 80 եւ Վրաստանի 25 ներկայացուցիչ:

Բիձինա Իվանիշվիլին եղավ Երուսաղեմի Հին քաղաքում եւ այցելեց Արտասուքի Պատը: Վրաստանի վարչապետն այցելեց Երուսաղեմի Ուղղափառ Պատրիարքությունը եւ հանդիպեց Երուսաղեմի Պատրիարք, Նորին Սրբազնություն Թեոֆիլ Երրորդի հետ:

Բիձինա Իվանիշվիլին հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանցի հրեաների հետ: Վրացական հրեաները Իվանիշվիլուն շնորհեցին Պատվո մեդալ՝ դրանով արտահայտելով իրենց վերաբերմունքը երկրորդ հայրենիքի նկատմամբ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԵՆ ԵՐԿԿՈՂՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Իսրայելի կուտակած փորձը շատ կարեւոր է Վրաստանի համար»,- ընդգծեց Իվանիշվիլին:

Իր հերթին, Նեթանյահուն հայտարարեց. «Մենք ձգտում ենք կայուն խաղաղ կարգավորման (պաղեստինյան արաբների հետ), եւ դրան կարելի է հասնել միայն անմիջական բանակցությունների միջոցով, առանց նախնական պայմանների: Մեր նպատակն է շարունակել բանակցություններն այնքան, որքան կպահանջվի հակամարտության բոլոր գլխավոր հարցերը լուծելու համար»:

Հանդիպումից հետո, վարչապետերը ստորագրեցին մշակութային ոլորտում համագործակցելու համաձայնագիր:

ՔՐԵԱԿԱՆ

ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՑԱՔՆՆՈՒՄ Է ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը հարցաքննել է Թբիլիսիի քաղաքապետարանի շուրջ 30 աշխատակցի եւ Թբիլիսիի սակրեբուլոյի մի քանի պատգամավորների՝ քաղաքապետարանի բյուջեից միջոցների ապօրինի յուրացման գործով:

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը հայտարարել է, որ Թբիլիսիի քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի աշխատակիցներն ազատ են արձակվել ֆինանսական ոստիկանությունից: Քննչական ծառայության հայտարարության համաձայն, սակրեբուլոյի եւ քաղաքապետարանի բարձրաստիճան աշխատակիցները կանչվել էին քաղաքապետարանի բյուջետային միջոցների յուրացման եւ ծախսման մասին քննչական ծառայության վարույթում գտնվող գործի կապակցությամբ՝ որպես վկաներ: Նշվում է, որ գումարը հասնում է 50 միլիոն լարիի: Քննչական ծառայությունից հայտարարել են, որ տվյալ փաստի կապակցությամբ հետաքննությունը շարունակում է եւ, դրա ավարտից հետո, հասարակությանը կտրամադրվի մանրամասն տեղեկատվություն:

Թբիլիսիի քաղաքապետ Գիգի Ուգուլավան Ժողովրդական պաշտպանից պահանջում է արձագանքել քաղաքապետարանի եւ սակրեբուլոյի աշխատակիցների, ինչպես նշել է նա, ապօրինի կալանմանը: Նա ընդգծել է, որ բոլոր այն մարդիկ, ովքեր կալանվել են, դատախազություն կներկայացնեն դիմումներ՝ պարզելու տեղի ունեցածը:

Եթե հաստատվի «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցության այն պնդումը, որ քաղաքապետարանի եւ Թբիլիսիի շրջանային վարչությունների աշխատակիցներին կալանել եւ հարցաքննել էին առանց նախնական կանչի հարցաքննության համար, ապա դա դատավարական գործընթացի խախտում է: Այս մասին հայտարարել են «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության եւ «Վրաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի» ներկայացուցիչները՝ հավելելով, որ եթե տվյալ փաստը հաստատվի, ապա կազմակերպությունը կպահանջի պատժել մեղավորներին:

* * *

Հունիսի 28-ին Վրաստանի ֆինանսների նախարարության ֆինանսական ոստիկանությունը ձերբակալել է Թբիլիսիի քաղաքապետարանի չորս աշխատակցի՝ Թբիլիսիի փոխքաղաքապետ Դավիթ Ալավիձեին, Թբիլիսիի Զարգացման հիմնադրամի նախագահ Դավիթ Ավալիանուն, Թբիլիսիի գնումների ծառայության ղեկավար Ալեքսի Տաբուաշվիլուն, Թբիլիսիի Կրծանիսիի շրջանի փոխղեկավար Դմիտրի Չխեիձեին: Նրանք մեղադրվում են 48.930.822 լարի յուրացնելու եւ ծախսելու մեջ:

ՆՈՐ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ՎԱՆՈ ՄԵՐԱԲԻՇՎԻԼՈՒՆ

Ինչպես հայտարարել են Վրաստանի դատախազությունից, նախկին վարչապետ, Վրաստանի նախագահի «Միասնական ազգային շարժում» կուսակցության գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլուն ներկայացվել է լրացուցիչ մեղադրանք. նա մեղադրվում է բանկիր Սանդրո Գիրգվլիանու սպանության մասին գործի հետաքննությունը կեղծելու եւ ճշմարտությունը բացահայտելու դեմ խոչընդոտներ հարուցելու մեջ: Վանո Մերաբիշվիլու փաստաբանը հայտարարել է, որ իր պաշտպանյալը ժպիտով ընդունեց իրեն ներկայացված նոր մեղադրանքը: Գիորգի Չիվիաշվիլին լրագրողներին հայտարարել է, որ ՆԳ նախկին նախարարն իրեն մեղավոր չի ճանաչում ներկայացված մեղադրանքներում:

ԱՐՁԱԳԱՆՔ

Սամեգրելոյի երկրամասում իրավապահները հայտնաբերված զինանոցի եւ մարդկանց կտտանքների ենթարկելու տեսանյութերի թեման շարունակում է մնալ հասարակայնության ուշադրության կենտրոնում:

ԿՈԲԱԽԻՁԵՆ «ԱԶԳԱՅԻՆՆԵՐԻՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՆԱԼՈՒ ԿՈՉ Է ԱՆՈՒՄ

Ինչպես հայտարարեց Վրաստանի խորհրդարանի առաջին փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն, եթե «Ազգայինները» որոշակի պատասխանատվություն են զգում մարդկանց կտտանքների կապակցությամբ, պետք է ընդունեն քաղաքականությունից հեռանալու որոշում: «Ի տարբերություն «Ազգայինների», «Քաղաքացիական շարժումը» ավելի մեծ պատասխանատվության զգացում ուներ եւ հեռացավ, իսկ սրանք նախագահության թեկնածուներ են առաջադրում»,- հայտարարեց Կոբախիձեն:

ՉԻ ԿԱՐԵԼԻ ՄԵՂԱԴՐԵԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

«Մեկընդմիշտ պետք է պարզվի, թե ովքեր են մեղավոր, եւ չի կարելի կուսակցության բոլոր անդամներին մեղադրել»,- հայտարարեց խորհրդարանական փոքրամասնության ներկայացուցիչ Գիգի Ծերեթելին՝ արձագանքելով ընդդիմախոսների մեղադրանքներին, որ ազգային շարժումը» դահիճ է, եւ բոլորը մասնակից են եղել կտտանքների:

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ԿՏՏԱՆՔՆԵՐԻ ՓԱՍՏԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի ներքին գործերի նախկին նախարար եւ նախկին վարչապետ, իսկ ներկայումս «Միասնական ազգային շարժում» նախագահամետ կուսակցության գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլին, որը նախնական կալանքի տակ է գտնվում, հասարակությունից ներողություն է խնդրել ոստիկանների կողմից կտտանքների, բռնության եւ անմարդկային վերաբերմունքի փաստերի համար, որոնք պատկերված են եղել գաղտնարաններում հայտնաբերված տեսանյութերում:

«Ցանկանում եմ ներողություն խնդրել բոլոր այն մարդկանցից, ովքեր իմ նախարար եղած ժամանակ ոստիկանների կողմից անմարդկային վերաբերմունքի զոհ են դարձել»,- նշել է Մերաբիշվիլին: ՆԳ նախկին նախարարն այն կարծիքին է, որ բոլոր նրանք, ովքեր մասնակցել են մարդկանց նկատմամբ ծաղրուծանակին, պետք է պատժվեն օրենքի ողջ խստությամբ: «Ես կապացուցեմ, որ ոչ մի կերպ կապված չեմ այդ փաստերի հետ»,- հավելել է Վանո Մերաբիշվիլին:



ԻՏԱԼԻԱ

ՅՈԹ ՏԱՐՎԱ ԱԶԱՏԱԶՐԿՈՒՄ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ

Միլանի դատարանը հունիսի 24-ին Իտալիայի նախկին վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնիին մեղավոր է ճանաչել դրամական վարձատրության դիմաց անչափահասների սեռական ծառայություններից օգտվելու մեջ եւ նրան դատապարտել յոթ տարվա ազատազրկման: Այդ հանցագործությունը թաքցնելու նպատակով, ծառայողական դիրքը չարաշահելու համար քաղաքական գործչին ցմահ արգելվել է զբաղեցնել պետական պաշտոններ: Նախկին վարչապետի փաստաբանները որոշում են ընդունել բողոքարկել դատարանի կայացրած վճիռը:

ԱԴՐԲԵՋԱՆ

ՄԵՀՐԻԲԱՆ ԱԼԻԵՎԱՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Ադրբեջանի իշխանամետ «Ադրբեջանի դեմոկրատական աշխարհի կուսակցություն»-ը (DADP) հոկտեմբերին տեղի ունենալիք նախագահական ընտրություններում, որպես նախագահի իր թեկնածու, ներկայացրել է երկրի առաջին տիկին Մեհրիբան Ալիեւային:

Հաշվի առնելով, որ Ադրբեջանի իշխող «Ենի Ազերբայջան» կուսակցությունն իր օրերս անցկացրած համագումարում երրորդ անգամ անընդմեջ թեկնածու է առաջադրել գործող նախագահ Իլհամ Ալիեւին, ապա ինչպես երեւում է, ամուսինները համատեղ կպայքարեն նախագահական աթոռի համար՝ միմյանց դեմ:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

ԿԱԶՄՎԵՑ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կառավարությունից «Դեմոկրատական ձախեր» ձախ կենտրոնամետ կուսակցության դուրս գալուց հետո, Հունաստանի վարչապետ Անտոնիս Սամարասը էական փոփոխություններ է կատարել նախարարների կաբինետի կազմում: Փոխվել են փոխվարչապետը, արտաքին գործերի պաշտպանության, արդարադատության եւ վարչական բարեփոխումների նախարարները:

Հունաստանում քաղաքական ճգնաժամը սաստկացել է այն բանից հետո, երբ կառավարությունը չկարողացավ համաձայնության գալ հանրային հեռուստատեսության ապագայի հարցի շուրջ, որը հունիսի 12-ին դադարեցրել է իր հեռարձակումը:

ԹՈՒՐՔԻԱ

ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

Թուրքիայի կառավարության հրաժարականի պահանջով տեղի ունեցող բողոքի ակցիաները երկրում շարունակվում են: Հերթական անգամ ոստիկանության եւ թուրք ցուցարարների միջեւ բախման թատերաբեմ է դարձել մայրաքաղաք Անկարան:

Թուրքիայում շուրջ 3 շաբաթ տեղի են ունենում հակակառավարական ցույցեր, որոնք սկսվեցին այն բանից հետո, ինչ մայիսի 31-ին ոստիկանությունը դաժանորեն ցրեց Ստամբուլի Թաքսիմ հրապարակում Գեզի այգու պաշտպաններին: Ոստիկանության եւ ցուցարարների միջեւ բախումների արդյունքում մինչ այժմ 5 մարդ է զոհվել, վիրավորվել՝ 7500-ից ավելի մարդ, ձերբակալվել՝ շուրջ 5 հազար մարդ:

ՍԻՐԻԱ

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎՐՈՊԱՅԻՑ

Եվրահանձնաժողովը (ԵՀ) որոշում է ընդունել ընթացիկ տարում լրացուցիչ 400 մլն եվրո հատկացնել Սիրիային եւ նրա հարեւան երկրներին տնտեսական ու մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով: Այդ մասին ասված է ԵՀ-ի նախագահ Ժոզե Մանուել Բարոզուի եւ Եվրամիության արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով գերագույն ներկայացուցիչ Քեթրին Էշթոնի հունիսի 24-ին հրապարակված համատեղ հայտարարության մեջ:

Մասնավորապես, Եվրահանձնաժողովը որոշում է ընդունել լրացուցիչ 400 մլն եվրո հատկացնել՝ որպես մարդասիրական օգնություն եւ որպես աջակցություն Սիրիայի ու նրա հարեւան երկրների «տնտեսական պահանջմունքներին» եւ զարգացմանը՝ դրանով իսկ Եվրամիության երկրների կողմից Սիրիային ցուցաբերած օգնության ընդհանուր գումարն ավելացնելով մինչեւ ավելի քան 1,25 մլրդ եվրո:

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԱՅՑԵԳԻՐ

ՎԻԶԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳՆ ԱՌԱՆՁԻՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ ՉԻ ՎԵՐԱՆԱՅՎԻ

Վրաստանի արտգործնախարար Մայա Փանջիկիձեի հայտարարության համաձայն, վիզային պայմանակարգը չի վերանայվի Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի երկրների, ինչպես նաեւ մի քանի այլ երկրների առնչությամբ:

Նա այսպես մեկնաբանեց իրանական ՁԼՄ-ներում տարածված լրատվությունն այն մասին, որ հուլիսի 1-ից Վրաստանի եւ Իրանի միջեւ վերականգնվում է վիզային պայմանակարգը: Ընդ որում, Փանջիկիձեն չի նշել, թե արդյոք այդ խստացումը կվերաբերի՞, թե՞ ոչ Իրանի միգրացիոն քաղաքականությանը:

«Հանձնաժողովն աշխատում է միգրացիոն օրենսդրության վրա: Հանձնաժողովի նախագահը արդարադարադատության նախարարն է: Օրինագիծը, որը կանոնակարգում է օտարերկրյա քաղաքացիների մուտքը եւ գտնվելը Վրաստանի տարածքում, մոտ ժամանակներս կներկայացվի խորհրդարան: Օրենսդրական փաթեթը, հնարավոր է, վերանայի եւ կանոնակարգի վիզային պայմանակարգը մի քանի երկրների հետ՝ հաշվի առնելով, որ Վրաստանը միակողմանիորեն վերացրել է վիզային պայմանակարգը 120 երկրների հետ: Այստեղ կլինեն փոփոխություններ, սակայն դրանք չեն վերաբերի Եվրամիության եւ ՆԱՏՕ-ի երկրներին, ինչպես նաեւ մի քանի այլ երկրների»,- հայտարարել է Մայա Փանջիկիձեն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ԱՆԿԱԽԱՆՈՒՄ Է ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԸ

Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարել է, որ այսուհետեւ գլխավոր դատախազությունն անկախ է արդարադատության նախարարությունից:

Բոլոր դատախազական լիազորությունները փոխանցվել են գլխավոր դատախազ Արչիլ Կբիլաշվիլուն, որը լիովին պատասխանատու կլինի դատախազների կադրային փոփոխությունների համար:

Նոր օրենքի համաձայն, արդարադատության նախարարությանն արգելվում է միջամտել դատախազության վարույթում գտնվող որեւէ քրեական գործի:

Պետք է նշել, որ դատախազությունում ստեղծվում է գլխավոր տեսչություն, որը պատասխանատու կլինի դատախազների գործունեության համար:

Բարձրաստիճան չինովնիկներին կալանելու եւ նրանց դեմ քրեական գործեր հարուցելու իրավասությունը նույնպես պատկանում է դատախազությանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՇԱԼՎԱ ՓԻՓԻԱ. «ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼ Է 3500 ԳՅՈՒՂ»

«Սակավահող ֆերմերների ամառային աշխատանքների աջակցության ծրագրի» շրջանակներում, ամբողջ երկրում հերկվել է 192568 հեկտար հող, եւ դրա համար ծախսվել է 195 միլիոն լարի:

Այս մասին հայտարարել է գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան՝ լրագրողներին պատմելով տվյալ նախագծի շրջանակներում կատարած աշխատանքի մասին, միաժամանակ նշելով, որ նախարարությունը հանրագումարել է ամառային աշխատանքները:

ՁԼՄ-ների ներկայացուցիչներն այցելեցին այն տնտեսությունները, որոնք ֆինանսավորվել են արտոնյալ ագրովարկերի ծրագրի շրջանակներում, նաեւ վերականգնված ոռոգիչ ջրանցքները եւ նախագծում ընդգրկված գյուղատնտեսական խանութները:

Փիփիայի խոսքերի համաձայն, նախագիծը օգնություն է ցույց տվել հողի 707918 սեփականատերի, եւ արդյունքում՝ սակավահող ֆերմերներն անվճար ստացել են 53 միլիոն լարի արժողությամբ պարարտանյութեր, 5 միլիոն լարի արժողությամբ սերմացու, 39 միլիոն լարիի՝ գյուղատնտեսական գործիքներ:

«Վրաստանի կառավարությունը գյուղատնտեսությունը դարձրել է իրատեսական առաջնություն: Վարչապետի նախաձեռնությամբ, ստեղծվել է գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ: Սեղմ ժամկետներում մշակվեցին առավելագույնս գործուն մեխանիզմներ՝ նպատակ ունենալով հիմնախնդիրները հասցնել նվազագույնի: Ծրագրի մեջ ընդգրկված է շուրջ 3500 գյուղ»,- հայտարարել է Փիփիան՝ հավելելով, որ կառավարությունը գյուղատնտեսության բնագավառում իրականացնում ու պլանավորում է կարեւորագույն ծրագրեր, եւ արդյունքը շատ շուտով կզգա յուրաքանչյուր քաղաքացի:

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐ ԱՌԱՐԿԱ՝ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ

Համայն Վրաստանի Կաթողիկոս -Պատրիարք Իլիա Երկրորդը առաջարկում է դպրոցներում մտցնել նոր առարկա, որը աճող սերնդին կնախապատրաստի ընտանեկան կյանքին:

Իր նոր նախաձեռնությունը Նորին Սրբությունը բարձրաձայնեց Ժողովրդավարական վերածննդի հիմնադրամի շնորհանդեսի ժամանակ, որին նա ներկա էր վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հետ միասին:

Պատրիարքը, խոսելով երկրում առկա ծանր ժողովրդավարական իրավիճակի մասին, նշեց, որ այդ հիմնախնդիրը հնարավոր է լուծել:

«Վրաստանը կարող է հաղթահարել այդ հիմնախնդիրը, եթե մենք դրա համար անենք ամեն ինչ: Մեր առաջնահերթ ուշադրության ներքո պետք է լինեն ընտանիքի ցածր մակարդակը, ցածր կուլտուրան: Մենք պետք է անենք ամեն ինչ, որպեսզի դպրոցներում դասավանդվի նոր առարկա՝ նախապատրաստություն ընտանեկան կյանքին»,- նշեց Նորին Սրբությունը:

ՍԿՍՎԵԼ Է ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ԲԱԽՇՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Վրաստանի փոխվարչապետ, կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին այցելեց Թբիլիսիի թիվ 53 հանրակրթական դպրոց եւ ծանոթացավ դասագրքերի բաշխման գործընթացին:

Գերատեսչության որոշմամբ, 2013-2014 ուստարվանից դասագրքերը Վրաստանի բոլոր հանրային դպրոցներում կտրվեն անվճար: Նորամուծությունը վերաբերում է շուրջ 650 հազար աշակերտի: Մինչեւ վերջին ժամանակներս, դասագրքեր ձեռք բերելու համար ամեն տարի ծնողները հարկադրված էին ծախսել 100-200 լարի:

Ինչպես հաղորդել են կրթության նախարարությունից, դասագրքերի բաշխման գործընթացը կազմակերպված է լավ եւ ընթանում է առանց խախտումների: Սեպտեմբերին աշակերտները կկարողանան դասագրքեր ստանալ դպրոցներում: Տվյալ փուլում տպագրված է 3 միլիոն դասագիրք, ինչը կազմում է ընդհանուր քանակի 60 տոկոսը:

Գերատեսչության տվյալներով, դասագրքերի բաշխումն սկսվեց հունիսի 18-ին, եւ դրանց 50 տոկոսն արդեն հանձնված է մի շարք տարածաշրջանների հանրակրթական դպրոցներին:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻՆ

Եվրամիությունն ընդունել է որոշում, որի համաձայն, Վրաստանի պետբյուջեին փոխանցվում է 4 միլիոն եվրո:

Դա կլինի առաջին դրամաշնորհը՝ ԵՄ հարեւանության քաղաքականության ծրագրի շրջանակներում, գյուղատնտեսության եւ գյուղի զարգացման համար (ENPARD):

«Մենք գոհ ենք այն հաջողություններից, որ Վրաստանում ձեռք են բերվել գյուղատնտեսության զարգացման քաղաքականության բնագավառում: Դրա վկայությունն են շրջաններում ստեղծված ագրոսպասարկման կենտրոնները, որոնք ֆերմերներին օգնում են խորհրդատվություններով, նաեւ նոր օրենսդրությունը, որը նախաձեռնված է ֆերմերային կոոպերատիվներ ստեղծելու նպատակով»,- հայտարարել է Վրաստանում ԵՄ դեսպան Ֆիլիպ Դիմիտրովը:

«ԵՄ-ի կողմից ագրարային հատվածում մեր ռազմավարության դրական գնահատումը վկայում է, որ գյուղատնտեսության արդիականացման եւ ֆերմերների աշխատանքի պայմանների բարելավման առումով, մենք ընթանում ենք ճիշտ ուղիով»,- հայտարարել է Վրաստանի գյուղատնտեսության նախարար Շալվա Փիփիան:

ENPARD ծրագիրը Վրաստանում սկսվել է 2013 թվականին: Դրա շրջանակներում, 40 միլիոն եվրո է հատկացվել գյուղատնտեսական արտադրանքի թողարկման բարձրացմանը եւ տարածաշրջաններում աղքատության հաղթահարմանը:



«ԵՍ ԿԳՆԱՄ, ԵՐԲ ԱՄԵՆ ԻՆՉ ԵՐԿՐՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՎԱԾ ԼԻՆԻ»

Բիձինա Իվանիշվիլին վարչապետի պաշտոնը կլքի միայն այն ժամանակ, երբ երկրում ամեն ինչ կարգավորված կլինի: Այս մասին նա հայտարարեց՝ մեկնաբանելով էստոնական հրատարկություններից մեկին տված իր հարցազրույցը, որտեղ խոսքը վերաբերում էր նախագահական ընտրություններից հետո վարչապետի պաշտոնից Իվանիշվիլու պաշտոնաթողության հնարավորությանը:

Նա ընդգծեց, որ ինքը երազում է Վրաստանում ստեղծել եվրոպական տիպի հասարակություն եւ մտադիր է այդ նպատակին նվիրել կյանքի մոտակա 20 տարին:

Միաժամանակ, Իվանիշվիլին խոստացավ, որ եթե հերթական ընտրություններից հետո դարձյալ մնան հարցեր, եւ եթե ինքը զգա, որ իր հեռանալով կծագի սպառնալիք երկրի զարգացման համար, ապա ինքը ոչ մի տեղ չի գնա:

ԿԱԶՄԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՄԱՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ

Վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է, որ մոտ ժամանակներս կավարտվի համաներդրումների հիմնադրամի հիմնման ընթացակարգը:

Ըստ վարչապետի, այսօրվա դրությամբ, հիմնադրամում արդեն կուտակվել է 5 միլիարդ դոլար, եւ ավելանում է նրանց թիվը, ովքեր ցանկանում են կատարել ներդրումներ:

«Շահութաբեր եւ լավ հաշվարկված նախագծերի դեպքում, հիմնադրամը պատաստ է առաջարկել համաֆինանսավորման 20-ից մինչեւ 75 տոկոսը: Նախագծեր կարելի է առաջարկել ամեն մի ոլորտի համար»,- նշել է վարչապետը՝ հավելելով, որ վրացական շուկան, թեեւ մեծ չէ, սակայն շատ հետաքրքրաշարժ է եւ շահավետ:

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՓԱԹԵԹ

Աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիդ Սերգեյենկոյի հայտարարության համաձայն, հուլիսի 1-ից կիրարկվում է ապահովագրության նոր փաթեթ: Այնտեղ, ընտանեկան բժշկի սպասարկմանը զուգահեռ, նախատեսվում է մասնագիտացված բժշկական սպասարկում: Դրա հետ մեկտեղ, ընդլայնվում է լաբորատորային-ախտահանական ուսումնասիրությունը, իսկ անհետաձգելի ստացիոնար սպասարկմանն ավելանում է նաեւ պլանային ստացիոնար սպասարկումը: Նոր ծրագրից կօգտվեն այն անձինք, ովքեր, հուլիսի 1-ի դրությամբ, չունեն մասնավոր ապահովագրային փաթեթ:

ԴՅՈՒՐԻՆԱՑԱՎ ԴԱՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Ինչպես հաղորդել են արդարադատության նախարարությունից, դյուրինացվել է դատվածությունը վերացնելու ընթացակարգը: Դատարանից մերժում ստանալու դեպքում, այժմ անձը, վեց ամսվա փոխարեն, կարող է միջնորդություն հարուցել արդեն երեք ամիս հետո: Արդեն կիրարկվում է համապատասխան օրենսդրական նախաձեռնությունը:

Պատիժ կրած անձի միջնորդագրի հիման վրա դատվածությունն հանելու հարցը քննարկում է շրջանային (քաղաքային) դատարանը, անձի մշտական բնակության վայրում:

ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼ Է ՆԱԽԿԻՆ ՆԳ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ

Վրաստանի ներքին գործերի նախկին փոխնախարար Նիկա Չիմծեիշվիլին, որը արդարադատության նախկին փոխնախարար Բուրջալիանու ամուսինն է, դատապարտվել է ազատազրկման՝ 6 տարի 9 ամիս ժամանակով: Նշենք, որ Չիմծեիշվիլին գտնվում է փախուստի մեջ: Նա մեղավոր է ճանաչվել ծառայական դիրքը չարաշահելու մեջ: Նա նաեւ 2 տարի 3 ամսով զրկվել է ղեկավար պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԲԻՋԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻ. «ՆԱՏՕ-Ի ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ՈՒՂԵԳԻԾԸ ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բիձինա Իվանիշվիլին հայտարարել է ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսսենի հետ հունիսի 26-ին Թբիլիսիում կայացած համատեղ բրիֆինգի ժամանակ:

Վարչապետի խոսքերով, հանդիպմանը «քննարկվել են Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի հետագա համագործակցության հարցերը, երկրում տեղի ունեցող գործընթացները եւ վրացա-ռուսական հարաբերությունների վիճակը»:

«Վրաստանն ամեն ինչ կանի Ռուսաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու համար»,- հայտարարեց Իվանիշվիլին: «Ես պարոն Ռասմուսսենին բացատրեցի, որ Վրաստանն արդեն քայլեր ձեռնարկել է Ռուսաստանի հետ հարաբերությունները նորմալացնելու ուղղությամբ: Կարծում եմ, որ այդ գործընթացում որոշակի դրական դինամիկա կա, թեեւ երկու երկրների հարաբերությունների նորմալացման գործընթացը դյուրին չի լինի»,- նշեց նա:

Վրաստանի վարչապետը հայտարարեց նաեւ, որ 2014 թվականից հետո վրացական անձնակազմը կմնա Աֆղանստանում:

Թբիլիսիում, Անդերս Ֆոգ Ռասմուսսենի հետ համատեղ ասուլիսում, վարչապետ Բիձինա Իվանիշվիլին հայտարարեց, որ Վրաստանը հոկտեմբերին կանցկացնի ամենաժողովրդավարական ընտրություններ: Ռասմուսսենն իր հերթին ընդգծեց, որ դա արժանավայել կգնահատի միջազգային հանրությունը:

Մամլո ասուլիսում Ռասմուսսենը հայտարարեց, որ ՆԱՏՕ Վրաստանի ընդունվելը կախված է միայն Վրաստանի եւ ՆԱՏՕ-ի որոշումից ու ալյանս մտնելու հարցը չի կարող որոշել որեւէ երրորդ երկիր:

Ա.Ֆ. ՌԱՍՄՈՒՍՍԵՆ. «ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌՈՒՄՈՎ ՄԵԾ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ Է, ՍԱԿԱՅՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵԼ»

Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլու հետ համատեղ մամլո ասուլիսում, ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը հայտարարեց, որ Վրաստանը բարեփոխումների առումով հասել է մեծ առաջադիմության, սակայն անհրաժեշտ է շարունակել գործընթացը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարի խոսքերով, ՆԱՏՕ-ն գնահատում է դաշինքին անդամագրվելու ճանապարհին Վրաստանի կողմից ձեռք բերված առաջընթացը: Նրա խոսքով, Աֆղանստանում անվտանգության աջակցման միջազգային ուժերի առաքելությանը մասնակցությունը ՆԱՏՕ-ին անդամակցելու տոմս չէ, դրա համար այս կամ այն երկիրը պետք է համապատասխանի որոշակի չափանիշների, իրականացնի հիմնարար բարեփոխումներ, այդ թվում՝ պաշտպանության ոլորտում: «Վրաստանը հաջողությամբ շարունակում է այդ գործընթացը, մենք գնահատում ենք նրա հաջողություններն այդ ճանապարհին, բայց առայժմ վաղ է խոսել ՆԱՏՕ-ի հերթական ընդլայնման ժամկետի մասին»,- ասաց գլխավոր քարտուղարը:

Ռասմուսսենը հույս հայտնեց, որ այս տարվա աշնանը Վրաստանում կանցկացվեն նախագահական ընտրություններ ամենաբարձր ստանդարտներով:

ՆԱՏՕ-ի Գլխավոր քարտուղարը հույս ունի, որ Վրաստանում կապահովվի օրենքի գերակայությունը եւ կոհաբիտացիան, ինչը անհրաժեշտ է Վրաստանի բարեկեցության համար:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը, Վրաստանի Ազգային գրադարանում հանդիպում ունենալով ուսանողների հետ, հայտարարեց, որ «Վրաստանն ընթանում է ճիշտ ճանապարհով, եւ նա մուտք կգործի ՆԱՏՕ»:

Թբիլիսիում, Հյուսիսատլանտյան խորհրդի հանդիպումը բացելիս, Անդերս Ֆոգ Ռասմուսսենը ողջունեց երկրի խորհրդարանի ընդունած բանաձեւն արտաքին քաղաքական կուրսի մասին:

Խորհրդարանական ընդդիմությունը՝ «Միասնական ազգային շարժում» նախկին կառավարող կուսակցությունը, հայտնել է գոհունակություն, որ կողմերը կարողացան պայմանավորվել տվյալ փաստաթղթի շուրջ:

ՀՅՈՒՍԻՍԱՏԼԱՆՏՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Թբիլիսիում անցկացվեց ընդլայնված հանդիպում Հյուսիսատլանտյան խորհրդի շրջանակներում, որին մասնակցեցին այդ խորհրդի եւ Վրաստանի խորհրդարանի ներկայացուցիչները:

Հանդիպումը բացեցին ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը եւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին: Գլխավոր քարտուղարն ընդգծեց Վրաստանի դերը Աֆղանստանում, որտեղ վրացի զինվորականները խաղում են «կարեւոր դեր»:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի խոսնակը շեշտեց, թե «Վրաստանը հպարտ է, որ կարող է մասնացել միջազգային անվտանգության ապահովմանը»:

Ռասմուսսենի եւ Ուսուփաշվիլու ելույթներից հետո նիստը փակվեց:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Անդերս Ֆոգ Ռասմուսսենը, Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան, խորհրդարանական փոքրամասնության անդամներ Թբիլիսիի միջազգային օդանավակայանում վրացական ստորաբաժանումներ ճանապարհեցին Աֆղանստան: Դրանով ավարտվեց Հյուսիսատլանտյան խորհրդի այցը Վրաստան:

Զինծառայողներին դիմեցին Իրակլի Ալասանիան եւ Անդերս Ֆոգ Ռասմուսսենը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը մեկ անգամ եւս նշեց վրաստանցի զինծառայողների ավանդը ծայրահեղականության եւ ահաբեկչության դեմ պայքարում:

Վրացական զինծառայողներին ճանապարհելուց հետո, ՆԱՏՕ-ի պատվիրակությունը մեկնեց Վրաստանից:

«ԱՐԵՎԵԼՅԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Հունիսի 27-28-ին Թբիլիսիում, «Ռեդիսոն բլյու Իվերիա» հյուրանոցի խորհրդակցությունների դահլիճում անցկացվեց «Արեւելյան գործընկերության» երկրների (Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Մոլդովա, Ուկրաինա, Բելոռուս) մշակույթին նվիրված առաջին նախարարական խորհրդաժողովը: Խորհրդաժողովի մասնակիցների թվում է նաեւ Հայաստանի մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը:

Խորհրդաժողովը պաշտոնապես բացեցին Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պաշտպանության նախարար Գուրամ Օդիշարիան եւ կրթության, մշակույթի մուլտիլինգվալիզմի եւ երիտասարդության հարցերի եվրակոմիսար Անդրուլա Վասիլյուն:

Միջոցառման կազմակերպիչներն են Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարությունը եւ Եվրահանձնաժողովը:

Նախարարն իր բացման խոսքում նշեց, որ Խորհրդաժողովը կուղղորդի հետագա աշխատանքը եւ թույլ կտա գնահատել «Արեւելյան գործընկերության» մշակութային ծրագրի միջանկյալ արդյունքները: Բարձր մակարդակի այս իրադարձությունը կարեւոր ուղենիշ կդառնա մշակույթի ասպարեզում «Արեւելյան գործընկերության» երկրների միջեւ գործակցության զարգացման ճանապարհին:

Ելույթներում ընդգծվեց, թեեւ մշակույթի՝ որպես տնտեսական զարգացման գործոնի ըմբռնումը ճանաչվել է միջազգային մակարդակով, Հարավային Կովկասի երկրների համար սա համեմատաբար նոր մոտեցում է: Սույն խորհրդաժողովը կոչված է այդ տարածաշրջանի երկրների համար շրջանառության մեջ դնել «մշակութային տնտեսություն» հասկացությունը՝ հնարավորություն տալով ծանոթանալ Արեւմուտքի փորձին եւ հասարակայնությանն օգնել ավելի շատ բան իմանալ համալիր մշակութային-տնտեսական մոտեցման հեռանկարների մասին:

Խորհրդաժողովը բաղկացած է հինգ նստաշրջաններից, որոնք միջազգային մակարդակի փորձագետները վարում են ըստ իրենց բնագավառների. ստեղծագործությունը եւ ինովացիաները՝ որպես զարգացման խթան, ավանդույթները եւ մշակութային ժառանգությունը՝ որպես զարգացման աղբյուր, գեղարվեստա-մշակութային արտադրությունները եւ դրանց տնտեսական ներուժը, տնտեսական զարգացմանը նպատակամղված մշակութային քաղաքականությունը, արհեստների դերը գեղարվեստի իրերի արտադրություններում:

Ավելացնենք, որ, Եվրամիության կողմից ֆինանսավորվող Արեւելյան գործընկերության մշակութային ծրագրի շրջանակներում, սեպտեմբերի 26-28-ին Թբիլիսիում կանցկացվի եւս մեկ միջոցառում. «Մշակույթի՝ որպես տնտեսական աճի շարժիչ ուժի ըմբռնումը. նոր մոտեցում Հարավային Կովկասի համար» թեմայով միջազգային խորհրդաժողովը:

ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ ԲԱԹՈՒՄԻՈՒՄ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ ԷԻՆ

Հունիսի 28-ին, Բաթումիի «Շերաթոն» հյուրանոցում, աշխատանքն սկսեց խորհրդաժողով՝ նվիրված Վրաստանի պաշտպանությանը եւ անվտանգությանը:

Ողջույնի խոսքով, մասնակիցների առջեւ հանդես եկավ պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:

Խորհրդաժողովի մասնակիցները քննարկեցին անվտանգության եւ պաշտպանության ոլորտում առկա ու ապագա մարտահրավերները եւ դրանց հաղթահարման ուղիները՝ ինչպես տարածաշրջանում, այնպես էլ՝ միջազգային մակարդակով:

Խորհրդաժողովում ելույթ ունեցավ վարչապետ Բիձինա Իվանիշվիլին: Նա ընդգծեց, որ «մեր երկիրը տասը տարի առաջ կատարեց միանշանակ ընտրություն, եւ այդ ընտրությունը եվրատլանտյան տարածքն է»: Վարչապետը շեշտեց անվտանգության նշանակությունը եւ Վրաստանի ավանդը միջազգային անվտանգության ապահովման ասպարեզում՝ հավելելով, որ «մեր գլխավոր զենքը միայն Վրաստանի ժողովրդավարական զարգացումն է»:

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ԾՐԱԳԻՐԸ

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ

Հազարամյակի մարտակոչերի կորպորացիան (ՀՄԿ) հաստատել է 140 միլիոն դոլար ծավալով հնգամյա ծրագիր Վրաստանի համար: Այդ միջոցները կծախսվեն Վրաստանում գիտության եւ տեխնոլոգիաների ոլորտի զարգացման համար:

Վրաստանի հետ առաջին հնգամյա ծրագիրը՝ 395,3 մլն դոլար, ՀՄԿ-ն ավարտեց 2011 թվականի մարտին: Այն հիմնականում ուղղված էր ենթակառուցվածքի զարգացմանը: Նույն թվականի հունվարին ՀՄԿ-ն հայտարարել էր, որ համաձայն է սկսել նոր ծրագիր Վրաստանի հետ: Դրանից հետո Վրաստանը մշակեց իր առաջարկությունները, թե ինչ ուղղություններով պետք է ծախսվի այն ֆինանսավորումը, որը կիատկացվի Հազարամյակի մարտակոչերի ծրագրի շրջանակներում երկրորդ փաթեթով:

Այս տարվա ամռանը ենթադրվում է ստորագրել երկրորդ կոմպակտը, որը կազմված կլինի երեք նախագծերից: Դրանք են. «Ընդհանուր կրթության որակի բարելավման նախագիծը», որի նպատակն է բարձրացնել ընդհանուր կրթության մակարդակը՝ դպրոցների վերականգնման, ուսուցիչների եւ վարչակազմի պատրաստման միջոցով. «Արդյունաբերական հմտությունների եւ աշխատուժի զարգացման նախագիծը», որի նպատակն է բավարարել շուկայի պահանջարկը համապատասխան տեխնիկական հմտություններ ունեցող քաղաքացիներով. «Բարձրագույն կրթության նախագիծը», որի նպատակն է ընդգրկել գործընկերների մեկ կամ մի քանի ամերիկյան համալսարաններից՝ գիտության, տեխնոլոգիաների, ինժեներային եւ մաթեմատիկական կրթության արդիականացման նպատակով:

«Տնտեսական աճի գլխավոր պայմաններից մեկը քաղաքացիների ապահովումն է կրթությամբ եւ հմտություններով, որ անհրաժեշտ են, որպեսզի նրանք հաջողության հասնեն արդիականացված էկոնոմիկայում»,- հայտարարել է ՀՄԿ գործադիր տնօրեն Դանել Յոհանսենը: